# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՖԻՆԱՆՍՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

# ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԻ ԱՄՓՈՓԱԳԻՐ

## 2024Թ. ՀՈՒՆՎԱՐԻ ԴՐՈՒԹՅԱՄԲ

2024թ.

## 2024Թ.-Ի ՀՈՒՆՎԱՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

- ***Համաշխարհային տնտեսություն.*** Տարեսկզբին ԱՄՆ-ում, Չինաստանում և ՌԴ-ում տնտեսական ակտիվության աճ է գրանցվել, իսկ Եվրագոտում շարունակվում է տնտեսական ակտիվության անկումը՝ սակայն ավելի թույլ տեմպերով: Նավթի և մոլիբդենի միջազգային գները աճել են դեկտեմբեր ամսվա նկատմամբ, իսկ պղնձի և պարենային ապրանքների գները՝ նվազել:
- ***Տնտեսության արտաքին հատված.*** արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի արագացում: Նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ՀՀ դրամը դոլարի նկատմամբ արժեզրկվել է 2.2%-ով: Եվրոյի նկատմամբ դրամի՝ հուլիսից նկատվող արժեզրկման տեմպը արագացել է նոյեմբերին՝ կազմելով 3.2%: Ռուսական ռուբլու նկատմամբ դրամի արժևորման տեմպը նախորդ ամսվա համեմատ թուլացել է՝ կազմելով 25.8%: Վերջին երկու տարիների անընդմեջ աճից հետո արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի նվազում (նվազումը կազմել է 3.2%-ով):
- ***Տնտեսության իրական հատված.*** տնտեսական ակտիվության աճի տեմպը հունվարին կազմել է 10.7%՝ հիմնականում պայմանավորված արդյունաբերության (ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճի բարձր տեմպերը շարունակվել են նաև հունվարին) առևտրի ու ծառայությունների աճով: 12 ամսյա գնաճը կազմել է -0.9%, մինչդեռ բնականոն գնաճը կազմել է -0.4%:
- ***Տնտեսության ֆինանսական հատված.*** բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ 22% վարկերի ծավալների աճով, որն ուղեկցվել է միջինում կայուն տոկոսադրույքներով: Պետական պարտատոմսերի տոկոսադրույքները ևս՝ դեկտեմբերին աճելուց հետո կայունացման միտումներ են ցուցաբերել: Հունվարի 30-ին ՀՀ ԿԲ-ն նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.75%:
- ***Տնտեսության հարկաբյուջետային հատված.*** հարկային եկամուտների աճի տեմպը դանդաղել է՝ կազմելով 0.3%: Պետական բյուջեի ծախսերի հունվարի աճը կազմել է 10.5%: Բյուջեի հավելուրդը հունվարի համար կազմել է 68.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունվարի հավելուրդի ցուցանիշին զիջելով շուրջ 10 մլրդ դրամով:

1. **Միջազգային զարգացումներ: 2024թ. սկզբին համաշխարհային տնտեսական ակտիվության աճ է գրանցվել՝ պայմանավորված ծառայությունների ոլորտի արագ աճով և մշակող արդյունաբերության ոլորտի կայունացմամբ: Ընդ որում, զարգացող տնտեսությունները շարունակել են գերազանցել զարգացած տնտեսությամբ գործընկեր-երկրներին:** ԱՄՆ-ում գրանցված աճը պայմանավորված է եղել գործարար ակտիվության աճով: Ծառայությունների ոլորտը շարունակել է ի համեմատ մշակող արդյունաբերության ոլորտի՝ առաջանցիկ աճ արձանագրել: Տարեսկզբին Եվրագոտու տնտեսության բարելավման որոշակի միտումներ են դիտվել, որը պայմանավորված է եղել գործարար ակտիվության նվազման տեմպի թուլացմամբ և աճի սպասումների ամրապնդմամբ: Ծառայությունների և մշակող արդյունաբերության նվազումը շարունակվել է, սակայն ավելի դանդաղ տեմպերով: Իտալիայում և Իսպանիայում գրանցվել է տնտեսական ակտիվության աճ, իսկ Գերմանիայում և Ֆրանսիայում տնտեսական ակտիվության թուլացումը խորացել է: Չինաստանում և ՌԴ-ում ծառայությունների և մշակող արդյունաբերության ոլորտների աճի միտումը պահպանվել է:

*Գծապատկեր 1.1. Composite PMI-ի միտումները.*




Հունվարին գնաճը ԱՄՆ-ում կազմել է 3.1%՝ դեկտեմբերի 3.4% գնաճի համեմատ՝ պայմանավորված էներգիայի և բենզինի գների կտրուկ նվազմամբ: Եվրագոտում հունվարին գնաճը կազմել է 2.8% (դեկտեմբերին՝ 2.9%), իսկ ՌԴ-ում գնաճի տեմպը մնացել է նախորդ ամսվա նույն մակարդակում՝ 7.4%: Մինչդեռ Չինաստանում երրորդ ամիսն անընդմեջ շարունակվել են գնանկումային միտումները:

**Գործընկեր երկրների կենտրոնական բանկերի կողմից շարունակվել է իրականացվել զսպող քաղաքականություն՝ պահպանելով սահմանված տոկոսադրույքները:** Մասնավորապես՝ ԴՊՀ քաղաքականության տոկոսադրույքը պահպանվել է 5.25 - 5.5% մակարդակում, իսկ ԵԿԲ տոկոսադրույքը՝ 4.5%, ՌԴ ԿԲ հիմնական տոկոսադրույքը՝ 16%, Չինաստանի բանկի տոկոսադրույքը՝ 3.45% մակարդակում:

*Գծապատկեր 1.2. Գնաճն ու դրամավարակային քաղաքականության արձագանքը գործընկեր երկրներում*




**Մետաղների և պարենային ապրանքների շուկաներում հունվար ամսին դիտվել են հետևյալ միտումները. նավթի միջազգային գինը նախորդ ամսվա նկատմամբ աճել է 3%-ով, մոլիբդենի գինը՝ 8.4%-ով, պղնձի գինը նվազել է 0.7%-ով, իսկ պարենային ապրանքների գները՝ 1%-ով:** Նավթի միջազգային գնի աճն առավելապես պայմանավորված է եղել ԱՄՆ սպասվածից արագ աճով, ինչպես նաև Արևմտյան Ասիայում մատակարարման շղթաների խնդիրներով: Մասնավորապես, խոշոր նավթային և գազային ընկերություններ փոխադրումներ իրականացնելիս շրջանցել են Կարմիր ծովը, ինչը հանգեցրել է բեռնափոխադրումների ժամանակահատվածի և սակագների աճի: Արդյունքում, նավթի միջազգային գինը հունվար ամսին կազմել է 80 ԱՄՆ դոլար մեկ բարելի դիմաց: Նախորդ ամսվա նկատմամբ այն աճել է 3%-ով, իսկ նախորդ տարվա համեմատ նվազել է 3.4%-ով:

Պղնձի միջազգային գինը հունվարին նախորդ ամսվա համեմատ նվազել է 0.7%-ով՝ կազմելով 8,338.9 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց, իսկ նախորդ տարվա համեմատ՝ 7.7%: Մոլիբդենի միջազգային գնի դեկտեմբերին գրանցված կտրուկ անկումից հետո հունվարին այն կազմել է 46,851 ԱՄՆ դոլար մեկ տոննայի դիմաց՝

նախորդ ամսվա նկատմամբ աճելով 8.4%-ով, իսկ նախորդ տարվա հունվարի նկատմամբ նվազելով 36.3%-ով:

Պարենային ապրանքների համաշխարհային գինը նախորդ ամսվա համեմատ նվազել է 1%-ով՝ պայմանավորված մսի և հացահատիկի գների անկմամբ:

*Գծապատկեր 1.3. Նավթի, մետաղների և պարենի գների զարգացումներ*







**2. Արտաքին հատվածի զարգացումներ: 2024թ. հունվարին արձանագրվել է արտահանման և ներմուծման աճի տեմպերի զգալի արագացում: Հունվարին արտահանման աճը կազմել է 2.1 անգամ (նախորդ ամսվա աճը՝ 2.4%)**, որին ամենամեծ նպաստումն է ունեցել դեպի ԱՄԷ արտահանումը: **Ներմուծումն աճել է 61.4%-ով (նախորդ ամսվա աճը՝ 40.3%)**:

*Գծապատկեր 2.1. Արտահանման և ներմուծման միտումները, մլն դոլար*




**Նախորդ 2 տարիների անընդմեջ աճից հետո 2024թ. հունվարին արձանագրվել է ՀՀ այցելած զբոսաշրջիկների թվի 3.2% նվազում (նախորդ ամսվա աճը՝ 1.7%):** Նվազմանը հիմնականում նպաստում է ունեցել ՌԴ զբոսաշրջիկների թվի նվազումը (շուրջ 12%-ային կետ):

*Գծապատկեր 2.2. ՌԴ-ից և այլ երկրներից դեպի ՀՀ զբոսաշրջիկների հոսքերը*




**Շարունակելով նախորդ տարվա նվազման միտումները՝ 2024թ. հունվարին ոչ առևտրային բնույթի զուտ դրամական փոխանցումները նախորդ տարվա հունվարի համեմատ նվազել են շուրջ 60%-ով՝** պայմանավորված հիմնականում ՌԴ-ից փոխանցումների շուրջ 66.4% նվազմամբ:

*Գծապատկեր 2.3. Ֆիզիկական անձանց ոչ առևտրային բնույթի փոխանցումների զուտ ներհոսքը*




**ՀՀ դրամը հունվարին ռուբլու նկատմամբ շարունակել է արժևորվել, իսկ դոլարի և եվրոյի նկատմամբ պահպանել է արժեզրկման միտումը:** Մասնավորապես՝ հունվարին նախորդ տարվա նույն ամսվա նկատմամբ ԱՄՆ դոլարի նկատմամբ դրամն արժեզրկվել է շուրջ 2.2%-ով: Եվրոյի նկատմամբ ևս դրամը արժեզրկվել է 3.2%-ով, իսկ ռուսական ռուբլու նկատմամբ՝ արժևորվել 25.8%-ով:

*Գծապատկեր 2.4. ՀՀ դրամի անվանական փոխարժեքի դինամիկան հիմնական արժույթների նկատմամբ*




**ՀՀ տնտեսական զարգացումներ: Տնտեսական ակտիվության աճի բարձր տեմպերը պահպանվել են նաև 2024թ. հունվարին և կազմել 10.7%:** Արդյունաբերության աճի տեմպի արագացման միտումները նկատվել են դեռ նախորդ տարվա նոյեմբեր-դեկտեմբեր ամիսներից, ինչը շարունակվել է նաև 2024թ. հունվարին՝ պայմանավորված հիմնականում ոսկերչական արտադրատեսակների արտադրության աճի բարձր տեմպերով:

*Գծապատկեր 3.1. ՀՆԱ-ի իրական աճ (%) և նպաստումներ (տ.կ.)*




Հատկանշական է, որ նախորդ տարվա սեպտեմբեր ամսից ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղը հանդիսացել է առևտուրը (ի հաշիվ մեծածախ առևտրի), նախկին ծառայությունների փոխարեն, ինչը շարունակվել է նաև հաջորդող ամիսներին: Սակայն վերջին ամիսների զարգացումների արդյունքում, ոսկերչության առաջանցիկ աճով պայմանավորված (շուրջ 11 անգամ)՝ հունվարին ՏԱՑ-ի աճն ապահովող հիմնական ճյուղը դարձել է արդյունաբերությունը, որին

հաջորդել են առևտրի (մեծածախ առևտուր) և ծառայությունների (ֆինանսական և ապահովագրական գործունեություն, կացության և հանրային սննդի կազմակերպում) ոլորտները: Արդյունաբերության ոլորտի վրա բացասաբար է ազդել հանքագործական արդյունաբերության 10.1 տոկոս անկումը (նպաստումը՝ -2.3 տոկոսային կետ): Շինարարության ոլորտը նույնպես նպաստել է աճին: Ընդ որում՝ շինարարության աճն ըստ ֆինանսավորման աղբյուրների հունվարին պայմանավորվել է հիմնականում բնակչության և կազմակերպությունների միջոցներով իրականացված շինարարության աճով:

Գծապատկեր 3.1. ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը (դիսկրետ, %)




Գծապատկեր 3.2. *ՏԱՑ և տնտեսության ճյուղերի աճերը նախորդ տարվա նույն ժամանակահատվածի նկատմամբ (կուտակային, %)*




**Տնտեսական բարձր ակտիվության պայմաններում հունվարին նախորդ տարվա նույն ամսվա համեմատ միջին ամսական անվանական աշխատավարձն աճել է 7.1%-ով՝ կազմելով 266,990 դրամ** (ընդ որում՝ պետական հատվածում աճել է 9.8%-ով՝ կազմելով 208,071 դրամ, իսկ ոչ պետական հատվածում՝ 6.0%-ով՝ կազմելով 291,429 դրամ): Աշխատավարձի աճին հիմնականում նպաստել են առևտրի, կրթության ոլորտների աշխատավարձերի աճերը: Իրական աշխատավարձը 0.9% գնանկման պայմաններում աճել է 8.0%-ով:

Հունվարին պաշտոնապես գրանցված գործազուրկների թիվը նվազել է 5.1%-ով, իսկ վարձու աշխատողների թիվն աճել՝ շուրջ 5.6%-ով, կազմելով 727,365 մարդ, պայմանավորված հիմնականում առևտրի, կրթության, ինչպես նաև կացության և հանրային սննդի կազմակերպման ոլորտներում աշխատողների թվի աճով:

*Գծապատկեր 3.3. Միջին ամսական աշխատավարձ, վարձու աշխատողներ, (դիսկրետ)*




**ՀՀ անշարժ գույքի շուկայում հունվար ամսին գները շարունակել են աճել, չնայած որ աճի տեմպը դեկտեմբերի նկատմամբ դանդաղել է**: Երևան քաղաքում բազմաբնակարան շենքերի բնակարանների շուկայական միջին գների աճը դեկտեմբերի համեմատ ըստ վարչական շրջանների տատանվել է -0.3-ից 1.4% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հունվար ամսվա նկատմամբ՝ 8.5-ից 16.7% շրջանակներում՝ ամենաբարձր գինը գրանցելով Կենտրոն վարչական շրջանում (1մ$^2$ մակերեսի համար՝ 900,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Նուբարաշեն վարչական շրջանում (1մ$^2$ մակերեսի համար՝ 228,100 դրամ): Մարզերում բնակարանների շուկայական միջին գների աճը դեկտեմբերի համեմատ տատանվել է -1.5-ից 3.3% շրջանակներում, իսկ նախորդ տարվա հունվար ամսվա նկատմամբ՝ 1.1-33.8%՝ ամենաբարձր գինը գրանցելով Կոտայքի մարզի Ծաղկաձոր քաղաքում (1մ$^2$ մակերեսի համար՝ 437,000 դրամ), իսկ ամենացածր գինը՝ Լոռու մարզի Թումանյան քաղաքում (1մ$^2$ մակերեսի համար՝ 26,500 դրամ):

**3. Դրամավարկային քաղաքականություն: Տարեսկզբին արձանագրվել է գնանկում:** 12 ամսյա գնաճը կազմել է -0.9%, իսկ բնականոն գնաճը կազմել է -0.4%: Հունվարի 30-ին Կենտրոնական բանկը նվազեցրել է վերաֆինանսավորման տոկոսադրույքը 0.5 տոկոսային կետով՝ սահմանելով 8.75%:

Գծապատկեր 4.1. Գնաճը և վերաֆինանսավորման տոկոսադրույքը




12 ամսյա գնաճը շարունակել է պայմանավորվել հիմնականում սննդամթերքի գնաճի բացասական (-2.4 տոկոսային կետ) և ծառայությունների գնաճի դրական (1.1 տոկոսային կետ) նպաստումների հակակշռմամբ, ալկոհոլային խմիչքների, ծխախոտային արտադրատեսակների և ոչ պարենային ապրանքների նպաստումները փոքր են եղել, համապատասխանաբար՝ 0.3 և 0.1 տոկոսային կետ:

Գծապատկեր 4.2. 12 ամսյա գնաճին նպաստումները, %-ային կետ




**4. Ֆինանսական միջնորդություն: Հունվարին բանկային համակարգի ֆինանսական միջնորդությունը շարունակել է առաջանցիկ լինել տնտեսական ակտիվության համեմատ՝ բնորոշվելով նաև ավանդների նկատմամբ վարկերի առաջանցիկ աճով:** Այսպես, ի տարբերություն նախորդ տարվա հունվար ամսի, վարկերի ծավալների աճը (22.0%) զգալիորեն գերազանցել է ավանդների ծավալների աճին (9.4%): Ռեզիդենտների վարկերի աճը կազմել է 21.7%, իսկ ռեզիդենտների ավանդների աճը՝ 16.4%: Վարկերի բարձր աճը ըստ ոլորտների շարունակել է ընդգրկուն լինել. չնայած ամենաբարձր նպաստումը շարունակում են ապահովել հիփոթեքային (5.7%) և սպառողական (5.4%) վարկերը, տնտեսության ոլորտների (բացառությամբ՝ արդյունաբերության) վարկավորումը ևս աճում է հիմնականում բարձր տեմպերով (այսպես, շինարարության և սպասարկման ոլորտներում աճերը կազմում են համապատասխանաբար 42.4% և 31.2%):

Ավանդների և վարկերի ծավալների տարբերությունը, որը վերջին 2 տարիների ընթացքում էականորեն բարձրացել է և ապահովում է զգալի իրացվելիության բարձիկ, սկսել է աստիճանաբար փոքրանալ: Դրան նպաստում է հատկապես ոչ ռեզիդենտների ավանդների որոշակի նվազումը՝ 8.8% նախորդ տարվա հունվարի, և շուրջ 67 մլրդ դրամի նվազում՝ դեկտեմբերի նկատմամբ: Այնուամենայնիվ, պատմականորեն այն շարունակում է պահպանվել բարձր մակարդակում (2022թ.-ի փետրվարի ցուցանիշից բարձր է շուրջ 418 մլրդ դրամով):

*Գծապատկեր 5.1. Բանկային համակարգի վարկերի և ավանդների 12 ամսյա աճերը, %*




**ՀՀ պետական պարտատոմսերի եկամտաբերությունները հունվարին կայունացել են, իսկ վարկերի և ավանդների տոկոսադրույքները հիմնականում անփոփոխ են:** Հունվարին պետական պարտատոմսերի նկատմամբ պահանջարկը շուրջ 1.5 անգամ գերազանցել է առաջարկը, ինչի արդյունքում պարտատոմսերի տոկոսադրույքները դեկտեմբերին գրանցված աճից հետո կայունացել են, իսկ ամսվա վերջում՝ փոքր-ինչ նվազել: Մինչդեռ վարկերի և ավանդների տոկոսադրույքները ընդհանուր առմամբ շարունակել են գտնվել իրենց միջին մակարդակների շրջականակներում: Բացառություն են հիփոթեքային և սպառողական վարկերը, որոնց տոկոսադրույքների աճը շարունակվել է դրանց նկատմամբ բարձր պահանջարկի ազդեցությամբ:

*Գծապատկեր 5.2. Ֆինանսական շուկայի տոկոսադրույքները, %*




**6. Հարկաբյուջետային հատված[1]: ՀՀ պետական բյուջեի հարկային եկամուտների աճը կտրուկ դանդաղել է:** 2024թ.-ի հունվարին հարկային եկամուտները կազմել են 177.6 մլրդ դրամ՝ նախորդ տարվա հունվարի նկատմամբ աճելով 0.3%-ով:

*Գծապատկեր 6.1. Հարկային եկամուտների աճի տեմպը, %*




**Հարկային եկամուտների աճը պայմանավորող հիմնական աղբյուրները շահութահարկը, ակցիզային հարկն ու բնապահպանական և բնօգտագործման վճարներն են՝ համապատասխանաբար 2.6, 2.1 և 1.5%-ային կետ մասնակցություններով**: Բացասական նպաստում են ունեցել ավելացված արժեքի հարկը(-2.6%-ային կետ) և եկամտային հարկը (-6.3%-ային կետ):

*Գծապատկեր 6.2. Հարկային եկամուտների աճին նպաստումները, %-ային կետ*




**Պետական բյուջեի ծախսերի աճը առաջանցիկ է եղել եկամուտների նկատմամբ:** Ընդհանուր առմամբ, հունվար ամսին պետական բյուջեն ունեցել է 184.4 մլրդ դրամի եկամուտներ (նախորդ տարվա հունվարի համեմատությամբ աճելով 0.8%-ով), և կատարել 115.7 մլրդ դրամի ծախսեր (աճելով 10.5%-ով): Նշված ծախսերը ընդգրկել են 114.8 մլրդ դրամի ընթացիկ և 0.9 մլրդ դրամի ոչ ֆինանսական ակտիվների հետ գործառնություններ, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը կազմել են 5.0 մլրդ դրամ, ընթացիկ ծախսերը նախորդ տարվա հունվարի համեմատ աճել է 13.0%-ով, իսկ ոչ ֆինանսական ակտիվների գծով ծախսերը՝ 54.4%-ով:

*Գծապատկեր 6.3 Պետական բյուջեի եկամուտները, ծախսերը և պակասուրդը*




**Չնայած ծախսերի առաջանցիկ աճին՝ ձևավորվել է հավելուրդային պետական բյուջե ինչպես 2023թ. հունվարին:** Եկամուտները ծախսերի մակարդակին գերազանցել են 68.6 մլրդ դրամով՝ զիջելով 2023-ի հունվար ամսի 78.2 մլրդ դրամ հավելուրդի ցուցանիշին:

[1] Հարկային եկամուտների և պետական բյուջեի ծախսերի կազմում ներառված է հիպոթեկային վարկի տոկոսագումարների դիմաց եկամտային հարկի վերադարձը՝ ինչպես հաշվետու, այնպես էլ՝ համեմատվող ժամանակահատվածների համար: